

Փետրվարի 3-ին ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի հյուրն էր Հայաստանի Հանրապետությունում Ղազախստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Թիմուր Բիբիթայի Ուրազաևը: Քննարկվեցին երկու երկրներում լեզվի ուսումնասիրությանն առնչվող արդիական խնդիրներ, առանձնապես խոսք եղավ գիտության, առաջին հերթին լեզուների փոխադարձ շփումների շուրջ՝ իբրև մշակութային հարստացման մի ուրույն միջոցի:

* * *

Փետրվարի 8-ին ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ է այցելել ՀՅԴ կուսակցության արխիվների պատասխանատու, հայագետ, արևմտահայերենի պաշտպանության հանձնախմբի ատենապետ Երվանդ Փամբուկյանը:

Այցելուն տեղեկացավ, որ ինստիտուտում լուրջ հետազոտություններ են կատարվում արևմտահայերենի հնչյունական համակարգի և քերականական կառուցվածքի, բառապաշարի, համակարգչային տերմինաբանության, արևմտահայերենի արդի վիճակի ուսումնասիրության ուղղությամբ:

Հանդիպման ընթացքում համագործակցություն ծավալելու պայմանավորվածություն ձեռք բերվեց արևմտահայերենին առնչվող խնդիրների վերաբերյալ:

Շոշափվեցին նաև տարածաշրջանային վերջին զարգացումների հետևանքով հայկական համայնքների իրավիճակը, Սփյուռքում հայապահպանությանն առնչվող տարաբնույթ հարցեր:

* * *

Մայրենի լեզվի օրվան նվիրված միջոցառումների շարքում Սփյուռքի նախարարությունը և ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը տարիներ շարունակ կազմակերպում են գիտական նստաշրջաններ, համաժողովներ, քննարկումներ և սեմինարներ: Այս տարին ևս բացառություն չէր: Փետրվարի 20-ին ԳԱԱ նիստերի դահլիճում տեղի ունեցավ Սփյուռքի նախարարության և ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կազմակերպած «Հայոց լեզուն դպրոցական դասագրքերում» կյոր սեղան-քննարկումը:

Միջոցառմանը ներկա էին Սփյուռքի նախարար Հ. Հակոբյանը, Կրթության և գիտության նախարար Լ. Մկրտչյանը, ԳԱԱ նախագահ Ռ. Մարտիրոսյանը, լեզվաբաններ, ուսուցիչներ, ինչպես նաև մտավորականներ՝ գիտական և ուսումնական տարբեր հաստատություններից: Տեսաուղերձով քննարկմանը մասնակցեցին նաև սփյուռքի անվանի գործիչներ: Քննարկման

մասնակիցները հանդես եկան հետաքրքիր զեկուցումներով: ԳԱԱ լեզվի ինստիտուտի գիտաշխատողներ Բ. Գ. Թ. Մ. Սարգսյանը և Բ. Գ. Թ. Գ. Մկրտչյանը կլոր սեղանքննարկմանն ընդառաջ այցելել էին Երևանի տարբեր թե'դպրոցներ' ավագ և հիմնական, թե' վարժարաններ, կազմակերպել քննարկումներ ուսուցիչների հետ: Համակարգելով դպրոցական դասագրքերում առկա խնդիրները, վերհանելով թերությունները՝ նրանք հանդես եկան ուշագրավ դիտարկումներով և առաջարկներով:

ԳԱԱ լեզվի ինստիտուտի տնօրեն Վ. Կատվայանը, կարևորելով մայրենի լեզվի անադարտության խնդիրը դպրոցական դասագրքերում, կոչ արեց բոլոր պատկան մարմիններին, մասնագետներին, լեզվաբաններին լեզվի ինստիտուտին ներկայացնել իրենց դիտարկումներն ու առաջարկները, որպեսզի ինստիտուտը համակարգի դրանք և առաջարկ-ծրագիր ներկայացնի կրթության և գիտության նախարարությանը:

* * *

«Սոցիալական ցանցերում հայոց լեզուն դրսևորվում է այնպես, ինչպես կենցաղում ու առօրյայում: Դա խոսակցական հայերենն է, որը պարզապես արտահայտվում է գրավոր տեսքով: Պետք չէ շատ կենտրոնանալ սոցիալական ցանցերում հայերենի գործածության վրա, քանի որ դրանցում գրում են այնպես, ինչպես խոսում են: Դա

նորմալ է: Աննորմալն այն է, որ գրվում է ոչ թե հայերեն տառերով, այլ լատինատառով», - ասաց ՀՀ ԳԱԱ Լեզվի ինստիտուտի տնօրեն Վ. Կատվայանը: Նա մասնավորապես նշեց հետևյալը. «Սոցցանցերում մարդիկ ազատ են արտահայտվում, և պարտադիր չէ, որ դրանցում խոսքը «մաքրամաքուր» գրական հայերեն լինի: Այնպես որ՝ խոսակցական հայերենի նման գործածությունն իր մեջ մեծ վտանգ չի պարունակում: Խոսակցական լեզուն էլ ունի իր իրավունքները:

Պարզապես պետք է այդ հայերենը «ժարգոնախառն» չլինի, օտար, անհարկի բառեր չլինեն, չլինեն նաև քերականական կամ բառային կոպիտ սխալներ և այլն: Ինչքան մաքուր լինի խոսակցական հայերենը, այնքան ավելի լավ: Դա ազատ խոսք է և անվերահսկելի: Սոցիալական ցանցերի լեզուն վերահսկելը նույնն է, ինչ եթե փորձենք փողոցում մարդկանց խոսակցությունները վերահսկել: Եվ ասենք՝ ինչո՞ւ դուք գեղեցիկ հայերենով չեք խոսում և այլն»:

Բանախոսը վստահեցնում է, որ լատինատառով գրելու վտանգը մեծ է՝ պարզաբանելով, որ մայրենի լեզուն ազգային նկարագրի ամենակարևոր արտահայտությունն է, իսկ մայրենին պիտի իր բոլոր դրսևորումներն ունենա մայրենիի ձևով, ոչ թե օտարալեզու այբուբենի: «Ամենավատն այն է, որ մարդու գիտակցության մեջ է նստում այդ օտար այբուբենը, դա խայտառակություն է: Դա ոչ թե միայն վիրտուալ տի-

րույթում է, այլև մարդու մոտ արդեն հայոց այբուբենի մոռացություն է լինում: Երբ հայը հայերեն, բայց օտար տառերով է գրում, դա աղտոտում է լեզուն, այլև ազգային նկարագիրն է կորչում:

Հաճախ նաև շատ տգեղ բաներ են գրում, գուցե նաև մեր այբուբենը թույլ չի տալիս այդքան իջնել, որքան իրենց ազատ են զգում ու օտար այբուբենով ինչ ասես գրում են»: Երբեմն նաև հայերենի ուղղագրության վատ իմացությամբ է բացատրվում լատինատառ գրելը: Բայց սա ոչ ճիշտ հիմնավորում է, որին բանախոսն անդրադառնում է հետևյալ կերպ. «Սխալներով գրողները միշտ էլ գրում են սխալներով, կարծում են, որ ավելի լավ է՝ սխալներով հայատառ գրել, քան՝ լատինատառ: Ես չեմ կարծում, որ սխալներից խուսափելով են լատինատառ գրում: Եթե այդ գրողներն այդքան գիտակցեն, որ սխալներից պետք է խուսափեն, ապա կփորձեն սովորել: Կարծում եմ՝ սա կա՛մ սովորության հարց է, կա՛մ տեխնիկան թույլ չի տալիս հայատառ գրել, կա՛մ էլ օտարամոլության խնդիր կա»:

Հայերեն խոսքում նորաձև դարձած անգլալեզու r-ի կամ ռուսերենի Ե-ի գործառությունը Վ. Կատվայանը համարում է հովեր, որոնք կգան ու կանցնեն: Նա դա բացատրում է կամ տարիքային առանձնահատկությամբ, կամ աչքի ընկնելու ցանկությամբ: «Ուղղակի տգեղ է ու տհաճ: Երիտասարդը պիտի իմանա, որ պետք է բառերը ճիշտ ար-

տասանել: Գրական լեզվում այդ լեզվական ծեծծեքումները պիտի չլինեն: Հաճախ դիտավորյալ են անում՝ գիտե՛ք, սեթևեթում են: Դա օտարամոլություն է: Դա միշտ էլ եղել է: 19-20-րդ դդ. մեր մտավորականներն իրենց գրվածքներում ունեն նույն մտահոգությունները, ինչ մենք՝ հիմա: Ուղղակի մենք հիմա պետություն ունենք և պետք է կարողանանք մեր պետական լեզվին տեր կանգնել, ուղղորդել բոլոր միջոցներով: Դա լեզվամշակույթի խնդիր է: Պետք է ընդհանրապես հասարակության լեզվամշակույթը բարձրացվի: Իսկ լեզվամշակույթը կարող է բարձրացվել կրթության համակարգում, նաև լրատվամիջոցներով: Ժողովուրդը հաճախ լեզվի մասին չունի ճիշտ պատկերացում: Մարդիկ հաճախ ամաչում են բարբառով խոսել: Նրանց թվում է, թե դա գռեհիկ է, վատ է, մինչդեռ դա սովորական հայերեն է և իր իրավունքներն ունի: Երեխան դպրոցում պիտի գեղեցիկ հայերեն խոսել սովորի: Եթե գրական լեզուն ճիշտ է դասավանդվում, ապա նրանց խոսակցական լեզուն ինքնաբերաբար մաքրվում է: Աշակերտները պիտի շատ պատմեն, խոսեն դասին», - կարծում է Վ. Կատվայանը: Նա նկատում է, որ մեր խոսակցական լեզվի ամենախոցելի կողմն օտար բառերի առատությունն է՝ պոլ, պարավո, ակուշկա, լյուստրա, խալադելնիկ և այլն: «Բացի այդ՝ խոսակցական լեզվում շատ սխալներ կան, որոնք շատ տգեղ են: Օրինակ՝ ե խոնարհման բայերը գործածում են

իբրև ա խոնարհման բայեր՝ ծիծաղել-ին ասում են ծիծաղալ, գովել-ին՝ գովալ և այլն: Սրանց դեմ նույնպես պետք է պայքարել, որտեղ, իհարկե, կարևոր է դպրոցական ուսուցումը»,- ավարտում է իր խոսքը բանախոսը:

* * *

Ապրիլի 28- ին ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում տեղի ունեցավ սեմինար-քննարկում՝ նվիրված կերպի և ժամանակի քերականական կարգերին: Զեկուցումով հանդես եկավ ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի գիտաշխատակից, բ. գ. թ. Ս. Ավետյանը: Նա ներկայացրեց հայերենի ժամանակի և կերպի քերականական կարգերը ընդհանուր և տիպաբանական լեզվաբանության լույսի ներքո, ինչպես նաև անդրադարձավ Է. Ադայանի և Գ. Զահուկյանի տեսակետներին:

Հետաքրքիր առաջարկներով և դիտարկումներով հանդես եկան նաև ինստիտուտի տնօրեն Վ. Կատվալյանը, Լ. Հովհաննիսյանը, Լ. Հովսեփյանը, Ս. Տիդյանը: Սեմինարն իր հարցադրումներով հետաքրքիր էր ու բովանդակալից, որոշ հարցերի վերաբերյալ հետագա մտորումների առիթ տվեց:

* * *

Սույն թվականի մայիսի 3-ին ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում հյուրընկալվեցին Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի պրոֆեսոր տ. գ. դ. Է. Մանուկ-

յանը և ԻՍՄԱ հասարակական կազմակերպության աշխատակիցներ Ք. Աղաբեկյանը և Օ. Մանուկյանը: Է. Մանուկյանը լեզվի ինստիտուտի աշխատակիցներին ներկայացրեց «Համացանցային բազմալեզու բառարանային համակարգ» ծրագիրը, պատասխանեց կիրառական լեզվաբանության աշխատակիցներին հուզող հարցերին: Կատարվեցին գործնական բնույթի աշխատանքներ ծրագրի շրջանակներում: Տեղի ունեցան առանձին խմբային արդյունավետ քննարկումներ: Առաջարկվեց շարունակել գիտագործնական համագործակցությունը լեզվի ինստիտուտի և ԻՍՄԱ հասարակական կազմակերպության միջև՝ լեզվի ինստիտուտի կողմից լեզվաբանական բնույթի հարցերին աջակցելու և առաջացած խնդիրներին գիտական լուծում տալու նպատակով:

* * *

Մայիսի 4- ին ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում տեղի ունեցավ երիտասարդ լեզվաբանների խորհրդի նիստ: Օրակարգում երիտասարդ լեզվաբանների առաջիկա գիտաժողովի կազմակերպական հարցերն էին: Հետաքրքիր դիտարկումներով հանդես եկավ ինստիտուտի տնօրեն Վ. Կատվալյանը՝ ողջունելով երիտասարդ լեզվաբանների խորհրդի անդամների նախաձեռնությունները: Խորհրդի նախագահ բ. գ. թ. Սիրունյանն առաջարկեց թեմատիկ բաժանումներ անել, ընտրել նիստի

նախագահողների, ինչպես նաև երիտասարդներին խրախուսող միջոցներ ձեռնարկել, ինչպես, օրինակ՝ գիտաժողովի լավագույն զեկուցումները տպագրել ինստիտուտի պարբերականներում: Խորհրդի անդամները քննարկեցին նաև գիտաժողովի նյութերի տպագրությանը, ինչպես նաև գիտաժողովի անցկացմանն առնչվող այլ հարցեր:

* * *

Սույն թվականի մայիսի 11- ին ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում տեղի ունեցավ երիտասարդ լեզվաբանների խորհրդի ընդլայնված նիստ՝ ինստիտուտի ասպիրանտների և հայցորդների մասնակցությամբ: Հանդիպման նպատակը երիտասարդ լեզվաբանների ամենամյա գիտաժողովի, ինչպես նաև մասնակցության ընթացակարգի մասին ինստիտուտի ասպիրանտներին և հայցորդներին տեղեկացնելն էր:

Խորհրդի նախագահ Բ. Գ. Թ. Տ. Սիրունյանն առաջարկեց խորհրդի անդամներին նախապատրաստական աշխատանքներ իրականացնել գիտաժողովին մասնակցել ցանկացող ասպիրանտների և հայցորդների հետ, հարկ եղած դեպքում օժանդակել զեկուցումները պատշաճ ներկայացնելու հարցում: Խորհրդի անդամները ընտրեցին պատասխանատուներ՝ ըստ բնագավառների: Որոշվեց նշանակել պատասխանատուներ, լեզվի պատմության ճյուղի՝ Հ. Խաչատրյանին, ընդհանուր և համեմատական լեզ-

վաբանության՝ Մ. Սարգսյանին, արևելահայերենի և արևմտահայերենի՝ Ա. Քարտաշյանին, բարբառագիտության՝ Մ. Բադալյանին:

Ինստիտուտի ասպիրանտները և հայցորդները նախ ներկայացրին իրենց կատարած աշխատանքները, ապա խորհրդի անդամների և ինստիտուտի տնօրեն Վ. Կատվալյանի հետ քննարկեցին հետագա անելիքները, մեծ ոգևորությամբ ընդունեցին առաջիկա գիտաժողովին մասնակցելու առաջարկը, նրանց հատկապես գրավեց հոդվածների տպագրության նոր ընթացակարգը, այն է՝ լավագույն հոդվածները տպագրելու են ինստիտուտի պարբերականներում: Նիստի ընթացքում որոշվեց հետագա հանդիպումների և քննարկումների ծրագիր մշակել:

* * *

Սույն թվականի մայիսի 16- ին ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում տեղի ունեցավ սեմինար-քննարկում՝ նվիրված երկբարբառների քննությանը հայերենի բարբառներում: Զեկուցումով հանդես եկավ բարբառագիտության բաժնի ավագ գիտաշխատակից, Բ. Գ. Թ. Զ. Բառնասյանը: Նա ներկայացրեց երկբարբառայնության ձևաբանական արժեք ունեցող իրողությունները հայերենի բարբառներում, ինչպես նաև անդրադարձավ Հ. Աճառյանի, Հ. Մուրադյանի, Ա. Ղարիբյանի տեսակետներին: Հետաքրքիր առաջարկներով և դիտարկումներով հանդես եկան նաև ինստիտուտի տնօրեն Վ. Կատվալ-

յանը, Լ. Հովհաննիսյանը, Հ. Մես-
րոպյանը, Գ. Գրիգորյանը: Սեմինա-
րը հետաքրքիր էր և բովանդակա-
լից, անցավ լայն քննարկման և
հարցադրումների մթնոլորտում:

* * *

Սույն թվականի մայիսի 25-ին
ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտը հյուրընկալել էր Հա-
յաստանի Հանրապետությունում
Ղազախստանի Հանրապետության
լիազոր և արտակարգ դեսպան Թի-
մուր Բիրբիտալի Ուրազանին: Հան-
դիպմանը ներկա էին ոչ միայն լեզ-
վի ինստիտուտի աշխատակիցները,
այլև ԳԱԱ տնտեսագիտության և
գրականության ինստիտուտի տնօ-
րենները, աշխատակիցները:

Բացման խոսքով հանդես եկավ
ԳԱԱ լեզվի ինստիտուտի տնօրեն
Վ. Կատվալյանը՝ կարևորելով տար-
բեր ժողովուրդների միջև բարեկա-
մական կապերը: Նա նշեց. «Մենք
համոզված ենք, որ այսօրվա մեր
հանդիպումը շատ կարևոր է. այն
Հայաստանի գիտական հաստա-
տությունների և Ղազախստանի
դեսպանատան միջև բարեկամա-
կան հարաբերությունների ու գի-
տական կապերի ստեղծման հիմք
կարող է դառնալ»: Տնօրենը հավե-
լեց, որ ինստիտուտը իր գիտաժո-
ղովներին և միջոցառումներին սի-
րով կհյուրընկալի թե՛ դեսպանա-
տան աշխատակիցներին և թե՛ դա-
զախ հետազոտողներին և գործըն-
կերներին:

Զեկուցումով հանդես եկավ Հա-
յաստանի Հանրապետությունում
Ղազախստանի Հանրապետության
լիազոր և արտակարգ դեսպան Թի-
մուր Բիրբիտալի Ուրազանը: Ողջու-
նելով ներկաներին և նկատի ունե-
նալով, որ հանդիպմանը ներկա են
երեք տարբեր բնագավառների (լեզ-
վաբանություն, տնտեսագիտություն
և գրականություն) ներկայացուցիչ-
ներ՝ դեսպանն առաջարկեց օրա-
կարգը բնորոշել մեկ բառով՝ *ար-
դիականացում* (մոդեռնիզացիա)՝
տնտեսության արդիականացում,
լեզվի և գրի արդիականացում, մշա-
կույթի և հասարակական գիտակ-
ցության արդիականացում: Դեսպա-
նը մանրամասն ներկայացրեց Ղա-
զախստանի ձեռքբերումները այս
ոլորտներում, ինչպես նաև անդրա-
դարձավ ՀՀ-ի և Ղազախստանի
մշակութային կապերին, երկու պե-
տությունների դիվանագիտական
կապերի արդի վիճակին: Հետաքր-
քիր էր հատկապես Ղազախստանի
լեզվաքաղաքականությունը, ինչպես
նաև լատինական գրին աստիճա-
նական անցնելու ծրագիրը: Դես-
պանը վստահեցրեց, որ Ղազախս-
տանի դեսպանատունը կաջակցի
ՀՀ ԳԱԱ ինստիտուտների և Ղա-
զախստանի լեզվի, գրականության
և տնտեսագիտական հետազոտու-
թյունների ինստիտուտների միջև
գործակցությանը, հավելեց, որ դա
կնպաստի երկու պետությունների
գիտական և մշակութային կապերի
հետագա ամրապնդմանը: